Կինը այստեղ մարդ էր, իր բուն նշանակութեամբ. նրա յարաբերութիւնները տղամարդի հետ աւելի ազատ էին: Նա մնացել էր իր նահապետական պարզութեան մէջ. նա դեռ չէր խարդախել յարեմական սովորութիւններով, որպէս Պարսկաստանի եւ Հայաստանի այլ կողմերի հայ կանայք, որոնք մահմեդականների ազդեցութեան տակ փոխել էին իրանց ազգային բնաւորութեան իսկական յատկանիշները:

Աւելի ազատ էին աղջիկները, դեռ կոյս, չամուսնացած աղջիկները: Նրանք թէեւ սովոր չէին խօսել սիրոյ վրայ, թէեւ չգիտէին սէթեւեթել մանուկ պատանիների հետ, բայց նրանց արգելուած չէր խօսել, զուարճանալ, զբօսանքի գնալ երիտասարդների հետ: Այսպիսի սպարտական սերտ յարաբերութիւնները երկու սեռերի, առաջ էր բերել ամբողջ ժողովրդի մէջ մի տեսակ անմեղութիւն, որ տիրում է մի ընտանիքի մէջ, քոյր եւ եղբօր մէջ:

«Ազատութիւնը, ասում էր Ասլանը, գտնւում է ժողովրդական կենցաղավարութեան երկու ծայրերի մէջ, մէկում, երբ նա դեռ իր նահապետական պարզութեան մէջ է ապրում, միւսում, երբ նա հասել է քաղաքակրթութեան լոյսին: Այս երկու ծայրերի միջոցում տիրում է ստրկութիւնը»: — Այս ժողովուրդը դեռ առաջին ծայրի վրայ է կանգնած:

Ծերունի տանուտէրը, տեսնելով, որ ես շատ շտապում եմ, հրամայեց իր ձիերից պատրաստել երկուսը, մէկը տոեց իր միջնակ որդուն եւ հրամայեց ինձ տանել եւ հասցնել Ս. — բէկի վրաններին, միւսը ինձ տալով, ասաց.

— Քո ձին գողացել է, ինձ համար նախատինք կը լինէր, որ մի «լաւ բարեկամիս» որդեգիրն իմ վրանում հիւր լինելուց յետոյ, այստեղից հեռանար առանց ձիու. դրա համար այս նժոյգը կը տանես որպէս իմ կողմից ընծայ:

Ես հրաժարուեցայ ընդունելուց, եւ միեւնոյն ժամանակ դժուարացայ Մըհէի հնարած սուտը պարզել, որ իմ ձին ամենեւին գողացուած չէր:

Ծերունին դարձեալ պնդեց, թէ ես հիւրասիրութեան դէմ վարուած կը լինեմ, եթէ չընդունեմ նրա պարգեւը: Ես պատասխանեցի:

— Դուք այս ձին ինձ նրա համար էք ընծայում, որ ես կորցրել եմ իմը, ես կընդունեմ, միայն այն պայմանով, եթէ կը գտնեմ իմ ձին, այն ժամանակ ձերը ետ կը դարձնեմ:

Ծերունին ասաց. միայն դա չէ պատճառը, այլ նա ցանկանում է, որ «իր բարեկամի» որդեգրին մի թեթեւ բանով պատուած լինի: Բայց ո՞վ էր նրա բարեկամը, որի որդեգիրը լինէի ես:

— Ծերունի որսորդը, — ասաց նա: